# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/2264 «28» 04 2015թ.

«Լ և Հ Ընկերներ» ՍՊԸ
Տնօրեն՝ Լ. Գամաղելյան
«Ջեոգրաֆիկ Թրևլ Քլաբ» ՍՊԸ
Տնօրեն՝ Ա. Պետրոսյան
«Կրիպտոն» ՍՊԸ
Տնօրեն՝ Ա. Բոբոխյան

Տեղեկացնում եմ, որ Երևան համայնքի կարիքների համար առաջացել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտություն:

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալ ծառայությունները:

Գնումը ֆինանսավորվելու է Երևան քաղաքի 2015թ. բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Ջեոգրաֆիկ Թրևլ Քլաբ» ՍՊԸ -ն, «Լ և Հ Ընկերներ» ՍՊԸ-ն և «Կրիպտոն» ՍՊԸ -ն ունեն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2. մասնագիտական փորձառություն.
3. տեխնիկական միջոցներ.
4. ֆինանսական միջոցներ.
5. աշխատանքային ռեսուրսներ:

Համաձայնության դեպքում ներկայացնել մասնակցի կողմից հաստատված՝ ստորագրված հայտարարություն վերոնշյալի մասին, գնային առաջարկը:

Միաժամանակ կից ներկայացնում ենք վերոնշյալ ծառայությունների գնման պայմանագրի նախագիծը:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **Գ. ՉԹՐՅԱՆ**

կատարող՝ Ի. Եղիազարյան
հեռ. 010 514 194